



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 18

Տ Ե Ա Ր Ա Ր

30 ԱՊՐԻԼ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱՌԱՌԱՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ
Տարեկան 50 Ղ.բ.	Տարեկան 54 Ղ.բ.	Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՏՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճիշտ Պեյ խանին ասկ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեւոյ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը տրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները շեմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹՐ՝ քե՛
Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիղի 1900 Արուեստահանդեսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են:


Հասր 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(کتابخانه جهان) مطبعه سی باب عالی جاده سی ۳۸

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ԺԻՅԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պապը-Ալի ասսէսի քիւ 38



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կտրի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղաւակի ազդիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատունը եւ զիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆԻ ԶԱՐԳԱՐԱՆԻ ՄԱՆՈՒԹԻՒՆ

ԲՆԲՍ.

1. Մեծ փողոց, Պոն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին.
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւթին դէմ.

ԿԱԼԱԹԱ.

1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊԱԼԱՏԱ.

1. Սուլթան համամ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13.

ՍԿԻՐՏԱՐ.

Չարչը Պոյու, թիւ 120.

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնագիտեր զաւառներու բոլոր ֆաշիֆներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզօղլուի տունը:

ՖԷՆԻԳՍ ՕԹԲԻՇԵԻՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵՍ.Լ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒՍԻ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Ժրանգ

ՀԻՊԵՂԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Ժրանգ

ՖԷՆԻԳՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք եւ կարասիք:
ՓԷՆԻԳՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնը մարդկային կանքի վրայ:
ՆԷՆԻԳՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ շողեհնաւի եւ առագաստանաւի վրայ:

Ընկերութեան գրամատունն է ԲԻԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասեն-
եակն է Պոլիս, Ալեանաք խան, Թիւ 11—16:

Ընկերութիւնն կ'ընդունի ի դաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիազօր Գերկայացուցիչ

Գ. ՖԷՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏՄՐԻ Թ/հ 18

ՇԱԲԱԹ

30 Ապրիլ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հանրակրթությունը բաղումը. (խմբագրական). — ՎԱՀԱՆ ԹՕՇԻԿՆԱՆ: Զիստաւ (Ոստիաւոր). — Ս. ԽԱՉՈՒՆԻ: Խօսուրուտի. — ԿԱՎՈՐՇ: Սեւր ցեղա ճերմալը դուրս. — ԿԱԼԻՊՍՈ: Թե ինչե՛ր կը խոսնիմ. — Ս. ԽՈՐԷՆ: Գիշեր մը (Բանաստեղծութիւն). — ԱՆԴՐԱՆԻԿ ԵՍԱՑՆԱՆ: Իփեհիմ վաճառակսն (Metamorphose). — ԼԻԼԱ: Menu (Փանդեղի). — ԳԵՈՐԴ ՍԻՄՔԷՇՆԱՆ: 10,000 Տարի Սառնակոյսի մը մէջ. (Հանրադիտակի բերքօնը) LOUIS BOUSSENARD (Թարգմ.) Յ. ՏԷՐ-ՅԱԿՈԲՆԱՆ:

ՀԱՆՐԱԿԻՆԵՐՈՒ ԹԱՂՈՒՄԸ

Հանրակրթող մը թաղումը, իզմիր, եկեղեցական հանդիսաւոր արարողութիւնով կատարուած ըլլալուն համար, մարդ ուկին մէկը ելեր իզմիրի քահանաները կը քննադատէ օրաթերթի մը մէջ, և անոնց այս տարօրինակ շահատակութեանը | հանդէպ՝ ոչադրութիւնը կը հրաւիրէ քաղաքին Առաջնորդ Սրբազանին:

Ձեռմ հասկնար թէ այդ մարդ ուկը ի՞նչ ըսել կուզէ, և ինչո՞ւ այդքան իրար անցեր է մինչև շահատակութիւնն ընթացքը այդ քահանաներուն, որոնք իրենց եկեղեցական պաշտօնէն դուրս ո՛րք է յանցանք մը չեն գործած այդ թաղման միջոցին, և Հայ Եկեղեցիին յատուկ ներողամտութիւնով նոյն իսկ չեն վարանած հանդիսաւոր թաղում մը կատարելու հանրակրթող մը համար:

Շահատակութիւնն ըսելով, մենք կը հասկնանք ընթացքը անոնց, այսինքն այն եկեղեցականներուն, — քանի որ ասոնց վրայ է խօսքերնիս — որոնք իրենց պաշտօնը խզի մասք չեն կատարեր, զեղծո՛ւմ կը դորձեն իրենց յանձնուած պաշտօնին մէջ, ո՛րքան բարոյապէս, նոյնքան ալ նիւթապէս, և բացարձակաւ

սլէս իրենց կոչումին հակառակ կենցաղ մը կունենան, զուրկ ըլլալով բոլորովին իրենց սըքեմին արժանի կեանքի մը գիտակցութենէն: Օրինակները ա՛յնքան շատ են որ, օրինակ մը տալու ձանձրութիւնը չենք ուղեր յանձն առնել և կըրկնել հոս ինչ որ հազարներով զուրցուած, խօսուած է մանաւանդ լրագրութեան մէջ:

Շահատակութիւն բառին իմաստը գիտնալով կամ չը գիտնալով չէ սակայն որ Իզմիրեան այդ թղթակիցը հարուածել կուզէ իր քաղաքին քահանաները հանրակնոյ մը յուղարկաւորութիւնը հանդիսաւոր թաղումով կատարած ըլլալնուն համար: Իրեն համար գուցէ այդ բառն իսկ բաւական չէ իր ներքին զայրոյթը արտայայտելու, որովհետեւ և կը խորհի թղթակիցը, ի՞նչ ըսել է որ հանրակին մը յուղարկաւորութիւն ունենայ, եկեղեցի տարուի, մեռելական հանդէսով թաղուի, յուղարկաւոր ունենայ և եկեղեցիին զանգակները անոր մահուան լուրը ծանուցանեն: Հանրակինը մա՞րդ է, զգացում, հաւատք և կամ սէր ունեցա՞ծ է որ սովորական մահկանացիներուն կարգը դասուի և վայելէ այն յարգանքը, զոր ուրիշներ կը վայելին իբրեւ բարոյականի չեմ գիտեր ո՞ր բարձունքները հասած մարդիկ:

Երանելի թղթակիցը ա՛յս հաւատքը ունի անշուշտ որ, իբր թէ եկեղեցիին դարաւոր նուիրականութիւնը պահպանելու և կամ անոր պատիւը բարձր բռնելու համար խաւարամտութեան իր գերադոյն արժանիքը երեւան կը բերէ և մեծ դործ մը տեսած ըլլալ կը կարծէ Առաջնորդին ուշադրութեանը յանձնելով այդ հանրակինը թաղող քահանաներուն արարքը, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ շահատակութիւն շահատակութեանց !:

Իե՛ղճ մարդուկ, որ միամիտ հաւատքը ունի թէ՛ եկեղեցական փառաւոր հանդիսաւորութիւններով թաղուած տիկիներուն ամէնքն ալ ճշմարտապէս արժանի են իրենց վայելած յարգանքներուն, ու անոնց դադաղներուն առջև խօսուած դամբանականները, անկեղծ ներքուրաններն են աշխարհիս մէջ իրենց ունեցած անբասիր ու բարեպաշտ կենցաղին և իրենց շնաշխարհիկ բարեսիրութիւններուն, մինչ հանրակինները, իբրեւ անպարկեշտ ու անբարոյ, պէտք է առանց աղօթքի ու պաշտամունքի, գետնին տակը անցնին ասոր անոր ձեռքով, իբր գերադոյն պատիժ իրենց աշխարհիկ կենցաղին:

Մարդուն հաւատքն է ասիկա, և խօսք չուզե՛ր ալ որ իր քարոզածին պատուար կանգնի և աններելի համարձակութիւնը ունենայ դէմ կանգնելու իրեն: Պէ՛տք է պատժուին քահանաները, ասանկ խայտառակութիւն չըլլար, ու եկեղեցին պէտք է իր դուռները ամս'ւր կերպով դուցէ այն բոլոր դադաղներուն առջև, որոնց մէջ հանրութեան նուիրուած կիներ կը հանգչին, կիներ, որոնք աշխարհի մարդոց բոլոր մեղքերն իւրացուցած, և այդ մեղքերուն ցաւէն ու ժառարառ իրենց վերջին շունչը փչած են անբարոյ մթնոլորտներու տակ, մարդկային վիշտներուն կեդրոնը եղող բոյներու մէջ:

Այո՛, պէ՛տք է պատժուին ու փիլոնազուրկ ըլլան այդ քահանաները, եթէ կուզուի որ Հայ եկեղեցին չ'անարգուի ու չը պղծուի, այսպէ՛ս կ'սրտայ Իզմիրի թղթակիցը:


Բայց այդ միամիտը չը գիտե՞ր արդեօք թէ՛ Եկեղեցին խաիր չը գնե՞ր իր անմուրդ ու մուրեքալ ոչխարին միջև, և նոյն իսկ մուրեքաներուն համար է որ առաւելապէս աղօթքներ կը կարդացուին Եկեղեցիներուն մէջ։ Մնաց որ ի՞նչ տարբերութիւն կայ անկեղծ մուրեքալի մը և կեղծաւոր անմուրդի մը, իբր անբարոյական ճանչցուած կնոջ մը և զաւակներու տէր եղող ճամարապէս անբարոյ մօր մը մէջ, մանաւանդ որ առաջինը ֆիզիքապէս անզուսպ երիտասարդներուն փրկութեան միջոցը կը համարուի, և երկրորդը՝ Եկեղեցիներու մէջ հանդիսաւորապէս իր ըրած ուխտը անարգողը, ինչ որ անարդանք մը պէտք է նկատել անշուշտ Եկեղեցիին դէմ։

Այս Եկեղեցին է որ հիմա երկրորդին առջև պիտի բացուի և առաջնոյն ոչ, երկրորդին փառաւոր թաղում պիտի կատարէ և առաջնոյն բանադրանք, երբ մանաւանդ այս առաջինը ո՞վ գիտէ, ի՞նչ անտանելի կեանքերէ և անօրինակ զրկանքներէ վերջ ինքզինքը յանձնե՞ր է հանրատուններու գիրկը, և ո՞վ գիտէ ո՞րքան աւելի բարեպաշտ և խղճահար սիրտ մը կը կրէ իր կուրծքերուն տակ։

Իշխման թղթակիցը շատ անգուլթ կը թուի ըլլալ մարդկութեան հանդէպ, որովհետեւ ո՛չ ոք պիտի կրնայ ուղիւ որ, սիրտ ու հոգի կրող մարդու մը մարմինը, ըլլայ ան միակին կամ հանրակին, փողոցի մը մէջ սատկող շուններուն նման դեմնէ դեմին քսիւտուի, անցորդին թուքերուն մէջ թաթխուելով։

Մարդ անասունի՞ մը անգամ ատանի բան չը պիտի փափաքէր, ո՞ր մնաց կնոջ մը։

ՎԱՀԱՆ ԹՕՇԻԿԵԱՆ



Ձ Ի Ա Ր Ե Ա Ր

Ձին՝ անվեհե՛ր կուգէ փախչիլ սանձաւճա՛լ,
Լերկ դաբե՛րուն կամանչութեան մէջ անհուն.
Ու քօւքիւնը՝ իր ոսճե՛րուն, մերք յսակ,
Կը խռովէ հանգիստը լուռ խոսե՛րուն։

Ու մարդկային ճիւղ ուծիս վստահած,
Կուգե՛մ զսպել այդ փսխուսքը հրճուական,
Սանձերը՝ պիտի յար փաշտելով, անկասկած՝
Թէ կը կասի արեւուն մէջ խօսական։

Բայց ձին խռովս կը մրցէ անդադար,
Անաստե՛լով կուռ հովերուն՝ համարձակ։
Աչնւն յառած դեպ ի հեռուն, կուրաբար
Ան կը դիմէ իր գնացին անգիտակ։

Մարդուն մղած հուսկ պայքարն ալ անվհաս
Խօլ վազք մըն է. Արեւ մը՝ մեծ անընդհատ։
Այդ ջանքը, բայց ցանցանք մ'է սին անհարկի,
Քանի որ ան օր մը ինքնին պիտի կասի։

Ս. ԽԱՉՈՒՆԻ



ԽՕՍՈՒԸՌՏՈՒՔ

Եթէ հարկ ըլլայ գլուխ երերոյնել ամէն ըսուածին, նախ պէտք է խոստովանիլ թէ մեր հայրիկները բազմ ծնած են եղեր :

Եթէ կը փափաքիք խորունկ յուսահատութեան մէջ թաղուիլ՝ ձեր նիւթական վաստակին կամ հոգեկան ինքիրներուն համար, բաւական է անգամ մը խօսեցնել ձեր մեծ-հայրիկը՝ իր երբեմնի անձնական յիշատակներուն վրայօք, և գրաւ կը դնեմ որ պիտի խորհիք :

— Արդեօք այդ ժամանակուան մարդիկը տարբեր էին :

Քա՛ւ լիցի . անոնք ալ ճիշդ մեզի պէս երկու ոտք ունէին և երկու աչք (բացի մի-ոտանիներէն ու միականիներէն, որոնք, այն ատեն ալ, մէկ ոտք ու մէկ աչք ունէին հարկաւ .) սակայն կ'երեւի թէ այն ատեն հաւան մարդիկը տարբեր հասկացողութիւն մը ունէին նիւթական ու սիրտի խնդիրներուն մասին :

Եւ ասոր հակառակը պահանջելը միամտութիւն պիտի ըլլար, քանի որ մենք չենք կրնար արդէն ճիշդ յարեւմտանը ըլլալ մենէ հարկը տարի առաջ ծնած մարդոց և շատ մը կէտերու մէջ չենք կրնար անոնց նմանելու յաւակնութիւնը ունենալ :

Թէ ինչո՛ւ :

Որովհետեւ, նախ և առաջ անոնք թրամուէլին ինչ ըլլալը չէին գիտեր, մինչ մենք երբ որ ուզենք թրամուէլ կը նստինք :

Անոնք իրենց միտքէն անգամ չէին անցըներ թէ՛ օ՛ր պիտի դայ որ մարդիկ կապոյտ ու կարմիր կօշիկ պիտի հագնին, ինչան վայելչութեան :

Եթէ ըսէիք անոնց թէ Բերայէն Ղալաթիա երթալու համար գետնին տակէն հարկ է անցնիլ, խա՛չ որ ձեր վրայ կը խնդային :

Անոնց ժամանակը պղտիկ աղաքը վարժարան կ'երթային դործնական կեանքի մէջ հարկ եղած գլխելիքները սովորելու համար, մինչդեռ հիմա մեր աղաքը վարժարան կը յաճախեն ճառ արտասանելու և տարին անգամ մը Գում-Պաքուի մէջ ճարտասանութիւնն յուսնելու համար :

Անոնց տիկիները պարզ Ֆորօզ մը կը կապէին մինչ մեր տիկիները (*) բուսաբանական պարտէզ մը կը զետեղեն իրենց գըլխուն վրայ :

Այն ատենները միայն բաւական հասուկ երիտասարդները սիկառ կը ծխէին՝ ա՛ն ալ իրենց ծնողքէն գաղտնի, մինչդեռ հիմակուան մարդիկը՝ իրենց մայրիկին արգանդէն դուրս կ'ելլեն կոր . . . սիկառ ի բերան :

Այն ատեն մեծ կարեւորութիւն կուտային դրող-կարգացողին, մինչդեռ հիմա մեր զարգացումը անա՛նկ վիճակի մը բերած հասցուցած է մեզ որ, եթէ կայ անկարեւոր մէկը, ան ալ մեր . . . գրող-կարգացողն է :

Այն ատեն էրիկմարդիկն էին որ կ'ին կը փնտռէին իրենց, մինչդեռ հիմակուան աղջիկներէն ոմանք իրենք անձա՛մը էրիկ կը փնտռեն կոր :

Այն ատեն խել մը բանաստեղծներ կային, որոնց գրածներուն կը հիանայինք և մինչև այսօր կը հիանանք, սակայն եթէ այդ բանաստեղծները այսօր նորէն փորձեն աշխարհ գալ, անոնց դրածները . . . զամբիւղը կը նետենք :

Մեր նախնիքները քսան տարեկանին կը կարգուէին, մինչ մենք կարգուելու համար ծերանալու կը սպասենք, որովհետեւ ատեն մը մարդ քանի մը ոսկի ամսականով տուն կը նայէր, մինչդեռ հիմա ինքզինքն ալ չի կրնար նայիլ :

Ատեն մը վարժապետները յարգի ապրանք էին հրապարակի վրայ և աշակերտները՝ « վարժապետ » ըսած ատեննին, խորունկ պատկառանքով մը կը լեցուէին, մինչդեռ հիմակուան աշակերտները փափաք ունին շատ անգամ իրենց վարժապետները անպատկառօրէն լեմօնի կեղեւի բռնելու :

. . . Բոլոր ասոնցմէ ետք, միամտութիւն պիտի ըլլար պահանջել թէ տարբերութիւն մը գոյութիւն չունենայ մեր ու մեր նախահայրերուն միջև, երբ արդէն անագին տարբերութիւն մըն է ինքնին դար մը առաջ կամ դար մը ետքը ծնիլը :

(*) Մեր տիկիները . — Աւելորդ է ըսել թէ այս տողերը գրողը տիկին չունի, բայց ասիկա խօսելու ձև մըն է :

Ու կեանքի պայմաններուն տարբերութիւնները մեզի այնպէս կարծեցնել կուտան թէ՛ անոնք մենէ աւելի երջանիկ էին իրենց ընտանեկան շրջանակին մէջ :

Այն ատենները կեանքը դարմանալի է եղեր :

Հարուստ մը՝ աղքատ աղջկան մը կը հանդպի և անոր ամբողջ օթիտը ինք չինէր լուր՝ կը կարգուի սիրտին սիրածին հետ :

Ու ասիկա կը պատահի եղեր ամէն վայր-կեանք, իբր ամենապարզ բան մը, մինչդեռ այսօր շատ մը հարուստ աղջիկներ ունիմ, որոնք շատ գո՛յ պիտի ըլլային, եթէ կարենային երիտասարդի մը օթիտը չինել :

Քիչ մը աւելի առաջ երթալով, կը հանդիպինք կոմսերու և դուքսերու, որոնք հովուներէնքու հետ կամուսնանան եղեր, մինչդեռ հիմակուան հովուներէնքը եթէ երբէք կարգուին, աս ալ շատ շատ . . . հո-վիւրի մը հետ է :

Այն ատեն մարդիկ մէկ ակնարկով կը սիրահարուէին և իրենց սէրը, միայն ամուսնութեան մէջ կրնար յագուրդ գտնել :

Բայց, կերեւի թէ հիմակուան ակնարկները ժամանակով իրենց ելեկտրական ուժը կորսնցուցած են, որով հիմա կրնամուտադրելու չափ ամենազեղանի կնկան մը պէքերուն նայիլ, առանց բնաւ միտքէս անցընելու անոր հետ Ս. Խորանին առջև ծնրադրել :

Արդեօք այն ատենուան աղջիկները հիմակուաններէն աւելի՞ գեղանի էին :

Ամենուրէն. — Ընդհակառակը, այսօրուանները շատ աւելի շնորհալի են անոնցմէ, և թերեւս ճիշդ ա՛յս է պատճառը որ չեն կրնար էրիկ գտնել :

Հիմակուան օրիորդները շատ սիրուն են, և ա՛յնչափ սիրուն որ մարդ կը չուարի թէ անոնցմէ ո՛րուն հետ . . . տաժանակիր չըզթայաւ որ աշխատութեան դատապարտէ ինքզինքը :

Մինչդեռ մեր նախահայրերուն օրով, գեղեցիկ աղջիկները հազուադիւրս են եղեր, և մարդ գեղեցիկ աղջիկ մը գտնելուն պէս

այդ քեիքիքը ձեռքէ չփախցնելու համար, անմիջապէս տէրութիւնը կը կանչէ եղեր :

Այս երաժ սրտի մխիթարանքով միայն կրնանք ինքզինքնիս մխիթարել :

Հին խմբագիրի մը հարցոյցէ՛ք և անպատճառ իր հին օրերը պիտի յիշէ ձեզի :

— Եղբա՛յր, յօդուած մը կը գրէի, և մէյ մըն ալ կը նայիս, խմբագրատան դուռը կը բացուէր և պահարանի մը մէջ քսան ոսկի կուգար ինծի :

Ուրիշ խմբագիր մըն ալ կ'ըսէ .

— Օր մը չեմ գիտեր որ յուզարկաւորութեան նկարագրութիւնը գրեցի, և քանի մը ժամ վերջը, տասը ոսկի եկաւ :

Կ'երեւի թէ բոլոր այս բաները խօսք մէկ ըրեր են մեր օրովը չկատարուելու, որովհետեւ ես ամէն օր յօդուած կը գրեմ և ի՞նչուր կը սպասեմ որ խմբագրատան դուռը բացուելով քսան ոսկի գայ ինծի, և յուզարկաւորութեան նկարագրութիւնը գրողներուն ալ քաջ գիտեն թէ՛ իրենց գրածէն ոչ թէ քանի մը ժամ, այլ քանի մը ափս ետքը միայն կրնան հաղլու հաղ քանի մը մէծիտ փրցնել :

Այն ատենները մարդ մը գովելը կամ պարսաւելը բաւական է՝ եղեր անոր քսակը բանալ տալու, մինչդեռ այսօր կրնաք ձեր ուղածին չափ գովել ու պարսաւել, մարդը ձեզի գէ՛մ պոռալու կանչելու համար բերանը կը բանայ, բայց քսակը՝ ո՛չ :

Հապա զերառանները. — Անոնք նպատակ մը կուտան եղեր, և մէկ անդամէն ուրիշուն, հարիւր ոսկի կ'առնեն եղեր. մինչդեռ հիմա ուղածիդ չափ նպատակ տուր և սափա լիջիդ պարտքը անգամ չես կրնար մաքրել :

Ըստ իս, ստիպիս, կատարելագոյնս պարապ խօսքեր են ասոնք :

Մարդիկ ասկէ հարիւր տարի առաջ ո՛չ աւելի վեհանձն էին, ո՛ր ալ հիմա նուազ կծծի են :

Անցեալ օր պատկեր մը տեսայ . —

Պառաւ կին մը, որ հողահարը գետին կը ձգէ և ոչ ոք կը ծռի զայն վերցնելու :

Ու նկարին տակ զրուած էր՝ պառաւ կնիկան բերնէն .

— Իմ ատենուանս երկոստարդները չատ աւելի քաղաքավար էին , երբ կին մը հողմահարը դետին ձղէր , ամէնը մէկ կը ծռէին՝ վերցնելու :

Ձէ՛ , տիկին , հիմակուան երկոստարդներն ալ ձեր ատենուանս երկոստարդներուն չափ քաղաքավար են և երբ կնիկան մը հողմահարը դետին ինչայ նորէն ամէնքնիս ալ կը փութանք վերցնել . միայն խնդիրը հոն է որ դուք . . . երեսուն տարի առաջուան գեղանի կինը չէք :

Գալով զրազէտներու վարձատրուելու եղանակին , c'est la même histoire !

Ատենս պիտի գայ որ մենք ալ պիտի ըսենք , երբ մեր յօդուածներուն հարիւր փառանգամ չպիտի տան մեր զաւակները .

— Դիտէ՛ք , ես ատեն մը մէկ յօդուածիս համար կէս ոսկի կ'առնէի :

Ասկէ պիտի հետեւցնէիք թէ երեւոյթները փոխուած են :

* *

Արդէն՝ անցած դացածին վրայ ցաւիլ մարդուս մոլութիւնն է :

Կը ճանչնամ մէկը , որ առաջին կնիկէն դժգոհ փնալուսն պատճառաւ , անկէ բաժնուեցաւ և ուրիշ կին մը առաւ :

Անցեալ օր իրեն հանդիպեցայ Դոնգօրտիայի Ֆուայէն :

— Ինչ կը փնտռես հոս , հարցուցի իրեն :

— Ինչ որ կը փնտռես դուն , պատասխանեց :

— Բայց ես կին չունիմ :

— Ձգէ՛ եղբայր :

— Ինչ , հիմակուան կնիկէ՞դ ալ գոհ ես :

— Հաւատա որ առաջինին հետ աւելի երջանիկ էի :

ԿԱՎՈՅ

Ձ Ե Կ Ո Յ Ց

Էվէրէկ-Ֆէնէսէի համար թերթիս գործակալութիւնը յանձնուած է ՄԵՄ. ԳԱՅՐԻԷԼ ԷՖ. ԹԱԳԻՈՐԵԱՆԻ , որուն պէտք է դիմել բաժանորդագրութեան համար :

ՍԵԻՐ ՆԵՐՍ

ՃԵՐՄԱԿԸ ԴՈՒՐՍ

— Հաւատացէք որ չունին . . .

— Որո՞նք . . .

— Դրազէտ երկոստարդներէն ո'ւանք . . .

— Ինչ բան . . .

— ՆԿԱՐԱԳԻՐ :

Ահա էն էական և է՛ն փնտռուած բանը , այն կարգ մը երկոստարդներուն վրայ , որոնց արտաքինէն կը խափուիք ու կը չլանաք , կը հմայուիք անոնց խօսքերէն ու իրենց արտաքին երեւոյթէն դատելով՝ ամէն բան զոհել կը փորձուիք , և սակայն երբեք չէք անդրադառնար անոնց մեծ պակասին . նկարագրին վրայ . նկարագիրը որ էն ցայտուն տարրն է , մարդուն մէջ , դիտելի է որ տակաւ կանխտանայ , կը ցնդի , կը հալի տեղի տալով սին ու թափուր կեղծիքին :

Դիտեցէք և կամ փորձեցէք :

Շատ մօտէն ճանչցած մէկ երկոստարդնիդ , որուն համակրած էիք , իր գրչի կարողութիւնը գնահատած , և շատ անգամներ նիւթապէս թէ բարոյապէս օգնած անոր նեղ և անել կացութիւններուն մէջ , տուններնիդ հիւրնկալած , վերջապէս անոր որ չէք զլացած բարեկամակցն ամէն ջանք և խնամք ահա նոյն այդ երկոստարդը օր մը օձի պէս կը փոխէ շապիկը ամենայնիւ և նոյն իսկ իրմէ անջատ երրորդական խնդրոյ մը առթիւ և մոռնալով ձեր առ ինքն ունեցած սէրն ու համակրանքը , իր թոյնն ու գոյնը դուրս կուտայ , կը մոռնայ վայելած բարիքները , առ ոչինչ կը գրէ ընդունած խնամքները և ձեռնառութիւնները , և մինչև իսկ կը յանդգնի բիրտ հրատարակութիւններով յարձակիլ ձեր վրայ վրէժ լուծելու համար . Ինչո՞ւ :

Որովհետեւ նկարագիր չունի , սկզբունք չունի :

Այսպիսիներու համար աղօթենք չաստուածքներուն ըսելով թէ՛ « Ո՛ր դիք , մեր կարգ մը հովիւներուն մի խնայէք շնորհել նկարագիր ըսուած տարրը , որով միայն պիտի կրնան արդարանալ իբր մարդ » :

Ձեր դէմքին խնդացող , ձեր չուրջը քրծնող ճերմակ երես բարեկամներու մի խափուիք , օր կուգայ իրենց գոյնը դուրս կուտան և այն ատեն կը հասկնաք թէ ձեր դուրսէն տեսած ճերմակը , ներքնապէս մութ է ու սև :

ԿԱԼԻՊՍՕ

ԹԷ ԻՆՉԵՐ ԿԸ ԽՈՐՀԻՄ

Մեր առաջադրյալ կրկները քաղել անգամ չ'են գիտեր կը գրէ մին, իսկ Լիլա իր անսպասու պաշարովը, ոտքը կը կոտորի կը գրէ, աջ ձեռքը կը կոտորի՝ ձախովը կը գրէ, ձախն ալ կը կոտորի՝ անտիպ գրութիւններ ունի, և վերջապէս կը գրէ, միշտ . . . :

— « Այո՛, միշտ իգական սեռուներն, այսինքն սեռակիցներուս պակաս կողմերը մատնանիչ ընկելու համար » ինչպէս կ'ըսէր անցեալ օր բարեկամուէի մը :

Մինչ օտարազգի կրկներ ոչ թէ միայն քաղել գիտեն այլ և այլերուն հաւասար արժանիքներ կը փայլեցնեն իրենց վրայ, մինչև անգամ վաճառականութեան մէջ քար հանելով իրենց հակասեռներուն, և կը գտնուին Եւրոպացի կրկներ որոնք Եւրոպայի չեմ գիտեր ո՛ր քաղաքներուն մէջ Թաղական կամ Հոգաբարձու եղած են, և այլերու հետ ժողովի մէջ կը նստին, կը խօսին, կը վիճին կրթական ու եկեղեցական խնդիրներու վրայ :

Գուցէ ընթերցողներուս մէջ խորհողներ գտնուին թէ՛ վերոյիշեալ ժողովարաններուն մէջ քուներնին չը տանելու միջոց մը յաջողած են գտնելու արու սեւին պատկանող նոյն այդ անգամները, սակայն ես իմ մասին կը խորհիմ թէ քանի որ ամէն ազգէ աւելի մենք Հայերս ատակ ենք որդեգրելու խելու *objectif*ի մը պէս ինչ որ օտարինն է, այդ կը խորհիմ, թէ օր պիտի գայ, գուցէ դար մը ետքը — զոր մենք բարեբախտաբար տեսնելու դժբախտութիւնը չը պիտի ունենանք և ոչ Լիլա « Հանրագիտակ » ին մէջ գրելու բախտը ունենայ — օր պիտի գայ որ Արիստոզոմ աղա պիտի ըսէ .

— « Զարուկ չօճուխին տէր չ'ըլլա՞ս, կաթ կուղէ կոր », իսկ տիկինը պիտի բացազանչէ :

— Բա քուկին գործդ ինչ է, չի նայի՞ս, մանաւանդ ինձմէ՛ աղէկ գիտես որ այսօր Խառն ժողովը բացասիկ նիստի հրաւիրած է . . . զմեզ, և մանաւանդ որ այսօր խիստ կարևոր գործ մը կայ կարծեմ, Զէնկիլէրի տէրտէրը մարդ մը պսակեր է որ արդէն ամուսնացեալ է եղբոր իր երկիրը :

Արիստոզոմ աղա. — Անանկ է նէ առ իր ինձնի պսակը չ'եղեալ համարելու է վէսէլամ :

Տիկինը. — Աղէկ ամա, ամէն խնդիր իր

հոգեբանական կէտը ունի, կոյս ընդ կուսի պսակեր են այդ մարդը աղջկան մը հետ, հիմայ մեղքը չէ՛ այդ աղջկան. հետեւաբար տէրտէրը պատժելու է, պսակն ալ չ'եղեալ կը համարուի, լմնցաւ գնաց :

— Է՛. . . աղջիկը՝ որ ամուսնացեր է այս մարդուն հետ, անգիտակցաբար, անոր մեղքը ինչ է, ինչո՞վ փոխարինելու է :

— Զիյտեմ արթըրս, ասիկայ ալ ժողովքին մէջը ես քուկին տեղդ կ'ըսեմ :

Իսկ Արիստոզոմ աղա մինչև դուռը կնոջը ընկերանալով .

— Զարուկ չը մոռնաս ըսելու որ ամուսնութիւնը կատարուելէն, մեծ « այո » ն ըսելէն ետքը չ'եղեալ համարելը ստա՛լ չ'ըներ, ապա թէ ոչ ես ալ վաղը . . . :

Տիկինը անհետացած կ'ըլլայ անշուշտ, Արիստոզոմ աղայի խօսքը բերնին մէջը թռուցելով :

Այն օրը, ո՞վ արդեօք այսօրուսներէն՝ գլուխը գորս պիտի հանէ գերեզմանէն, Հա՛տ՝՝՝ պօռալու համար անտարակոյս :

* * *

Տարօրինակութիւնները յաճախ Եանքիներու աշխարհքէն կուգան, այս անգամ սակայն մեր Բանագողին կարծիքը գտնէ առնելու էին խղճահար պատուելիները, մերժելէ առաջ այն եւս քան զեւս պատկանելի գումարը զոր քարիւղի մեծ իշխանը Բաքֆելլը կը նուիրէ Միսիօնարայան Պօքա ընկերութեան, սակայն այս վերջինը հակառակ իր մէջը տիրող այժմէ նիւթայան տագնապին, կը մերժէ (կալուոյին բերնին ջուրերը վաղեցնող) ահագին նուէր մը որ իր ոտքովը եկած է, և աւելի զարմանալին՝ խուճի մը պատուելիներ « պէտք է մերժել » կը պօռան այդ նուէրը, դիտէք ինչո՞ւ, վասն զի նուիրատուն անիրաւ ! մարդ մըն է եղբոր, վասն զի նուիրատուն աղբիւր մեծութեանը ծուռ են եղբոր այս աշխարհքին մեջ, գուցէ անդիի աշխարհքին մէջ չըսուելին ! ! Կէ՛ ինչ կ'ըսէք, այնուհետեւ, քանի որ « եկեղեցին ամէն բանէ առաջ հանրային բարոյականութեան և իր բարի համբաւին հոգածու պէտք է ըլլայ », խելք չէ եղբոր զրամ ընդունիլ այնպիսի անձէ մը որ իր

հարստութիւնը չափած ժամանակ հոգ չէր ընել հանրային բարոյականութեան համար:

20 փարայ չէ, այլ 20,000 անգլիական ոսկինոց նուէրի մը առջեւ այսքան նազ ընող պատուելիներ կ'ապրին եղեր տակաւին դարու մէջ, հաւատացէք մտքէս անգամ չէի անցընել սոյն օրինակ իրականութիւն մը:

Հայ խմբագրապետ մը մասնաւոր սրամտութեամբ դիտել կուտայ այն բարեխառնութիւնը զոր մենք ունինք նմանօրինակ պարագաներու մէջ, նկատի չ'առնելով նուիրատուներուն ապրելակերպը, և չը հետաքրքրուելով նուէրներուն ակէն ու աղբիւրին:

Իմ մասին կը խորհիմ թէ իրաւունք ունի յիշեալ խմբագիրը, վասն զի ատոր կ'ըսեն « ասեղին ծակէն Հնդկաստանը դիտել », բան մը որ մեր վարժապետները երբէք ընել չ'պիտի ուզէին անշուշտ: Հոս փակագծի մը մէջ թող ներուի ինձ ըսել թէ Թօշիկեանի խմբագրականներէն միոյն հետ կ'արժէ որ ծեծուի այս խնդիրը . . .

Գրագէտ (?) ոմն հրապարակաւ կը վըշտանայ այն « սառն անտարբերութեան » համար զոր մենք ունինք հանդէպ բանաստեղծութեան և այս առթիւ կ'ըսէ թէ Պետրոս Դուրեանի մայրիկին յուղարկաւորութեան օրը հազիւ 4-5 անձեր կային հայ գրականութիւնը կամ բանաստեղծութիւնը ներկայացնող: Ես իմ մասին չ'եմ հաւատար այս տեղեկութեան և ընդհակառակը կը խորհիմ թէ խումբ մը բազմաթիւ գրագէտներ փութացած էին վերջին յարգանք մը մատուցանելու քերթողամայրին որ ատեն մը « պահարանը եղած էր հանճարին »: Արդեօք բանի տեղ չը սեպեց այն soi-disant բանաստեղծները, որ օրուան թերթերուն մէջ յօդուածներ կը գրեն կոր, աէր ողորմեա, ՄԻՅՕՊ է, ինչ է ատ տղան, որ կ'ելլայ կը գրէ թէ « մէկ ձեռքի մատները կը բաւէին այն օրուան գրագէտները համբելու համար », ես սակայն կը խորհիմ թէ երկու ոտքերու մատերն ալ չէին բաւել անոնց թիւը նշանակելու համար, մասնաւոր Սկիւտարի պէս թաղի մը մէջ, ուր հարգ ամէն քայլափոխի

բանաստեղծի մը կը հանդիպի, թաղին կլիմայէն, ո'վ գիտէ, վասն զի ամէն թաղ իրեն յատուկ բերքը ունի, զոր օրինակ Արնաւուտ քէօյ ըսուելուն՝ մարդ անմիջապէս ելակը կը յիշէ, Եէտի դուլէ, հազար (մառու) ի հոմանիշ է, Վլանկա վարունգի և Սկիւտար . . . բանաստեղծ կ'արտադրէ, հետեւաբար շատ այլանկի է արդարեւ որ Պետրոս Դուրեան մը ծնող կնոջ թաղումը առանց բանաստեղծի կատարուէր: Զուարճալիքի զիմակին տակ ներկայացուցած տողերս ընթերցողները կըրնան ողբերգականի մը տեղ ընդունիլ:

Ս. ԽՈՐԷՆ

ՊԻՇԵՐ ՄԸ

Աւանային տխրունակ
Ու անճիւղոց գիշեր մը,
Ցուրս հովմ՝ ուժգին կը փչէր.
Երկինքն ալ՝ Եւս մուսլ էր . . . :

Ողբերգու բուն՝ լացերուն
Տխուր վանկերն կրկնելով՝
Սիրս վիշտով կը յուզէր.
Լուսնակն՝ ամպով գոցուած էր:


Լեռնած սիրս՝ կը հեծէր՝
Վիշտերուն տակ դրժուկի,
Թուխ ամպերու արտուէր
Կը կաթկթէր շիբ առ շիբ:

Եւ ես յուզուած կարեմկեր՝
Կըզգայի՝ քէ սրտիս մէջ
Կը մահաւար յոյս աւիւն.
Լացի ցաւս աղեխաւր . . . :

Ու հոգիս խորագոյն՝
Ծալներն խոցոց, արիւնց,
Առաստիս արտուով՝
Թրջեցի՝ ես այն գիշեր:

ԱՆԴՐԱՆԻԿ ԵՍԱՅԵԱՆ

ԻՓԵՔՏԻՆ ՎԱՋԱՌԱԿԱՆ METAMORPHOSE



— Իփեքճի՛ . . . տի՛ր . . . :

Ա՛մէն օր կը լըսէի այս յանկերգը փողոցին մէջ, երբ դեռ կարճ բանթալօն կը հագնէի ու երկու շաբաթը անգամ մը կօշիկ կը փոխէի, այնքան հուզուած տարիքիս մէջն էի այն ատեն :

Տժգոյն, նիհար ու պամպարակ մարդուկ մըն էր Դամիանոս աղան, որ իր իշուկին կռնակէն կը ձայնէր ամառը տաքուն, և ձմեռը ձիւնին . . . Իփեքճի՛ . . . տի՛ր . . . ր . . .

Նւ պէտք է խոստովանիմ թէ ամէն անգամ որ տունէն բան մը դնելու համար կանչէին այդ չրջուն պօնմատչէն, առիթէն օգտուելով իր էջը զբօսանքս կըլլար, մինչև որ Դամիանոս աղան իր տուփերը փաթթեր կայեր, ևս արեւն քրտինքը մտած կըլլայի ուրախութենէս և յոգնութենէս : Ու երբ գործը լրմնացած փողոց կըլար, նոյն յանկերգը դուրս կուտար մարդուկը, Իփեքճի՛ . . . տի՛ր . . . ր . . . :

Բաւական տարիներ վերջ, երբ օր մը կը յիշէի Դամիանոս աղայէն աւելի իր իշուկը, որ իմ զբօսանքս էր, ըսին թէ մեռած ըլլալու է, քանի որ չեղեալ ու չանցիր փողոցէն :

Նւ տարիներու յաջորդական անցնելուն մէջ մոռցուեցաւ Դամիանոս և անոր յանկերգը մարեցաւ այլ եւս :

×

Բազդը կը ժպտի կըսեն և ըսողները չեն խորհիր թէ՛ նոյն այդ բազդ ըսուածը երբեմն ոչ թէ կը ժպտի, այլ գահգահներու կը մտնէ զմարդ, այսպէս եղած էր Դամիանոս աղան :

Իր առջեւէն քշուող իշուկին տեղ կիւն մը, և վրայի զոյգ կրպակներուն տեղ ահագին մաղազու մը ունէր հիմա :

Նախորդ Իփեքճին այսօր վաճառական մը եղած էր :

Կը տեսնէք թէ բազդին պալօ մէկ ժպտալով չէ այս յեղաշրջումը, այլ գահգահը,

քանի որ Իփեքճին վաճառական ըլլալը սանկ ու նանկ բան չէ :

Դամիանոս աղայի անցեալը գիտնալէ վերջ, հիմա տեսէք թէ դրամը ի՞նչ շաղկիկ կը հագցընէ մարդուն :

Դամիանոս աղան առաջ տաղաւարէ տաղաւար քօլալը շաղկիկ կը հագնէր, հիմա ամէն օր :

Դամիանոս աղան շաբաթը անգամ մը ինքը կածիլուէր՝ հիմա երկու անգամ ապօնըմանով :

Դամիանոս աղան օրը տասն և չորս ժամ կը քալէր իր էշուն ետեւէն՝ հիմա կառքով կիջնայ կեկայ :

Դամիանոս աղան ամիսը անգամ մը միսը շուկայէն ձեռքովը կառնէր՝ հիմա տունը սպանդանոցի պէս միշտ կէս ոչխար կախած է խոհարարին մօտ :

Դամիանոս աղայի կինը առաջ գետինը տախտակ կը սրէր՝ հիմա երեսը կը սրէ օթօլիկով :

Դամիանոս աղայի կինը, առաջ բուրդ փխտան կը հագնէր՝ հիմա սաքէն տը լիօն :

Դամիանոս աղայի տղան առաջ երեք անեակ ունէր՝ հիմա աթաթըման առաջին յարկ :

Դամիանոս աղայի աղջիկը պամպ փէշով դուրս կեկար՝ հիմա բըղի տռա :

Դամիանոս աղայէնք առաջ Իփեքճիկնք կըսուէին՝ հիմա ԻփեքճԵԱՆ . . . :

Վերջապէս առաջուան մեր գիտցած Դամիանոս աղան՝ այսօր Ազնուաշուք Դամիանոս ևլն. ևլն. եղած էր :

Հիմա տեսաք թէ բազդը ոչ թէ կը ժպտալի, այլ ճաթիկ ճաթիկ գահգահներու կը մտնէ մարդը . . . եթէ ուզէ :

Շատեր չըմէնալովէն զարկաւ կըսէին, որ մէկը Հնդկաստանի մէջ հարուստ ազգականի մը ժառանգէն յառաջացած կը նկատէին, ոմանք ալ պարտէղին մէջէն քիւրով ոսկի գտած ըլլալը կը գուշակէին, սակայն

իրողութիւնը սա էր որ Դամիանոս աղան
օր օրի կիւռլէմիշ կընէր :

— Բա իփէկճի Դամիանոսին կնիկը նա-
յեցէք , փքըմ փքըմ կուգայ կոր . . . :

— Զօք չէ՛ . . . ատ էշէկի իփէկճին ալ
ասանկ կըլլա՞յ եղէր . . . :

— Քա ճանըմ մութլախ շըմէնտըֆէն մը
զարկած է , միւնքիւնը չիգայ . . . :

— Հինտիստանէն գէնկին խըսըմի մը մէ-
րասը ճըռթկեր են կըսեն կոր . . . :

— Բա չէ՛ . . . պախճայէն տէֆինէ կը-
տեր է տէյի խմացուեցաւ . . . :

— Կնկանը չամաչըրի երթալը ես գի-
տեմ . . . :

— Զարուհիցաս չէ՛ր քի ֆընտըլի փէշը
աղջկանը հանեց տուաւ . . . :

— Էյ խելքիս կուգայ հիմա , կնկանը
կեռտանը խազի հաւկիթի խտար կախուեր
է մեղայ . . . :

— Ըլլայի՛ն ասանկ ըլլայ , չարխալը աշճի
պիլէ դուռը կայնեցուցեր է . . . :

Ահա խօսակցութիւնը որ կանցնէր զի-
րենք ճանչցող կանացի չըջանալներու մէջ
ու բոլորն ալ ափ ի բերան կը մնային ի տես
Ազնուաշքացած Դամիանոս աղայի յաջողու-
թեան , և կարծիքներ զիրար կը հաւածէին ,
չար նախանձէ մղեալ , մինչդեռ իրականու-
թիւնը սա էր որ Դամիանոս աղայինք յա-
ջողութեան ճամբուն մէջ քառասմբակ կը
յառաջանային առանց անդրադառնալու ի-
րենց նախորդ վիճակին :

Մեր ընթերցողներուն հասկցնելու համար
թէ վերջէն եկած դրամը ի՞նչ կընէ մարդը
և կամ ուրիշ բառով յետին աղքատութենէն
հարուստի կարգ անցնող ընտանիք մը ի՞նչ-
պիսի գոյներ կառնէ , հոս վարը պիտի գը-
ծենք , պատկերացնելով Դամիանոս աղայի
ընտանեկան վիճակը , որ կատարեալ օրինակը
կրնայ ըլլալ այդ կարգի վերջեւ-տեսներու :

— Ինձի նայէ Դամիկ աղա , մինակ էլէ-
նին չկրնար կոր խըզմէթին հասնիր , առ-
տուշերը չորագնեցաւ հազցընող պէսլէմէ մըն
ալ պիտի բռնեմ . . . :

— Պէ կընի՛կ , աղէկ ամա էվէլ չըլլա՞ր
մի եմ . . . ատ չորապ հազնեւն ալ մեծ
խըզմէթ մընէ սանքի . . . :

— Տէր ողորմեայ , առաջ չուենէինք նէ-
խսէ , էյ հիմա . . . :

— Աղէ՛կ ամա , բէք ատ տէրէճէները
չենք . . . :

— Պարապ խօսք . . . զանէր չորապ-
ներս հազցընելու համար ամիսը եօթը մէ-
ծիտիէ պէսլէմէ մը լայըս չես տեսնար կոր
ինձի . . . :

— Զիյտեմ ամա , կնիկ , ասանկ երթանք
նէ , ինձի կուգայ քի կէնէ էշը առջիս ձգեմ
մահալլէն էլլամ պիտի . . . :

— Նայէ ինչեր կըսէ . . . սո՛ւս . . . ատ
վախիթը միտքս մի ձըգեր , թիւերս ոտք
կելլան կոր . . . : Էլէնի՛ . . . (սպասուհին
կը կանչէ) :

— Օռիսթէ՛ . մատամ . . . :

— Հայտէ Շքիկըլա կիթ տէ սէօյլէ քի
պուռզամը վերսին . . . :

— Բօլի գալա մատամ . . . :

— Սէտ ով է մատամ . . . :

— Ֆիստանճիս ո՞վ պիտի ըլլայ . . . :

— Ինկիլի՛դ է ֆիստանճիդ քի . . . չիյ-
տեմ կոր . . . :

— Կար կարող Հոռոբին տալու չէի՛ ես ,
հէլպէթ աղէկէն աղէկին կարել պիտի տամ . . . :

— Յակո՛ք . . . (սպասաւորը կը կանչէ) :

— Խրամմէ , խանում . . . :

— Հայտէ Մասէին զընայ տէ , սահաթը
ուրին լանտօ մը թող զրկէ , վիզիթաներ
ուռնի . . . :

— Դիլուս վրայ խանում . . . :

— Մասէ՛ն ով է մատամ . . . :

— Իշտէ ո՞վ պիտի ըլլայ , Պէյ օղլուին
էն թէմիզ առապսճին . . . :

— Հա՛ . . . էյ ո՛ւր պիտի երթաս քի . . . :

— Վիզիթաներ ուռնի՛մ ընկիք , հէմ ալ ,
սանկ քիչ մը Զինճիլլի խոյիին թառաֆը
սօլաչօ մը մէտէս կուղէ կոր . . . :

— Բէք աղէկ մատամ . . . ինտոր կու-
ղես նէ . . . :

— Վարպի՛տ . . . (խոհարարը կը կանչէ) :

— Հրամմէ՛ . . . :

— Յերեկը ի՞նչ ուռնիս . . . :

— Բօթլէթ բանէ . . . :

— Ը՛նչ . . . պըխմիշ եղայ ալթըլս . . .
ուրիշ :

— Էնկինաւ . . . :

— Ը՛նչ . . . նէխէ . . . ուրիշ :

— Պիքօք ա լա ուլուս . . . :

— Տահա՛ . . . :

— Սթոուտէլ ա, լ'ալըման . . . :

— Ինծի նայէ, հայտէ նէվրէկ մը առ
տէ մայօնէզ չինէ . . . :

— Շատ աղէկ մատամ . . . :

— Մատամբս, միտէդ չաւրուի՛ր ասանկ
խառըլըս ուտենէ . . . :

— Աման դո՛ւն ալ Դամիկ աղա՛, բիւ-
թիւն բիւթիւնէ պաշխալաշմիշ ես եղեր,
հինդ տեսակ կերակուրով մարդ կաւրո՛ւի
հիշ . . . :

— Չէ ամա միտէտ ալըշմիշ եղած չէ տէ
չելլաս բան մը հանես . . . :

— Բէթո՛ւ . . . (պարտիզպանը կանչե-
լով) :

— Պէնի իոթէտինիդ մատամ . . .

— Դամէլեալար աշմըշ ըսա, պիր կիւ-
ղէլ պուքէթ եար տէ կէթիր . . . :

— Շիմտի մատամ . . . :

— Բեզի բան մը ըսեմ, բէք ծարերը
թող կուտաս կոր . . . կը վախմամ քի . . . :

— Վախու բան չիգայ, օրս օր պիտի ը-
նեմ, ունիմ կը վայելեմ կոր, որի՞ ինչ . . . :

— Աղէկ ամա, ասանկ եօլ բոնենք նէ
Դամիւնոսը հաղը կը կըլլէ, խաղա՛ր ես,
ի՛նչ տէյի կը պատուառուիս կոր . . . :

— Ունիմ կընեմ կոր, պարտքով չէ՛ եա . . .

— Հիմա հուսա տեղը մարդ չիգայ ես,
միտքդ կուգա՞յ կոր իմ էշէլլի հալըս, ինծի
կուգայ քի տահա մոռցուած չէ իփէկճիու-
թիւնս, աշխարհք գիտէ քէյիլի մախառա
իլէն էօյիւշիւմ ծախելս . . . :

— Օ ճամլար պառուած օլտու, հիմա-
ճուկուանը նայինք . . . :

— Իշտէ ասանկ ծարերը թող տաս նէ,
քէյիլի մախառա չէ քի էսկի լաստիկ ալը-
եօրում պօռալու համար տասը դրուշ սէր-
մայէ չպիտի ունենանք . . . :

— Աման Դամիկ աղա, վրաս կէշու-
թիւն կուգայ կոր, հայտէ չէմշիյէդ առտէ
գործիդ գնայ . . . ըսելով սենեակէն դուրս
կելլայ, մէկուկէս մէթր փէշը գետինը քը-
սելով :

— Հէյ կիտի Դամիւնոս, նէ իտին նէ
օլտուն . . . վէ նէ օլաճագսըն, ըսելով հո-
վանոցը կառնէ դուրս կելլայ տունէն :

— Հաղիւ մէկ. ամա անցած թէ չէ, սղա-
սուհին կուգայ իմացնել թէ՛ կին մը եկած
է մատամբն հետ տեսնուելու համար :

— Բի՛մ տիր . . . :

— Տէն էզնօւիդօ մատամա . . .

— Սալօնա չըգար կէլիօրում . . . :

— Սեւերով կին մը վեր կառաջնորդուի ու
քիչ վերջը մատամ Դամիկ իր պատկառելի
ներկայութեամբը կը պատուէ հիւրը :

— Բարի լուս, աֆ կընես պոտանց կա-
նուխ թածիդ ընելուս համար . . . :

— Ասծու բարին ամա չեմ ճաշար կոր,
ո՛վ կըսուիք . . . :

— Տէր ողորմեայ, վախտով ձեր դրա-
յինը չէի՛ . . . Մարեէնէն չի ճանչնայիր . . . :

— Հիշ միտքս չիգար կոր . . . ո՛ր թա-
ռաֆը . . . :

— Սամլաթոմուլը, սա ուր է տուներ-
նիդ ալ սառնիճ չունէիք տէ, ճուրը խօլա
խօլա մենէ կառնէիք, հաթտա Դամիւնոս
աղային էշէկն ալ մեր պախճան կը ձգէիք
քի խոտ ուտէ տէյի . . . :

— Ատանկ բաներ չիյաեմ կոր, սխալ
եկած չըլլաս . . . :

— Տէր ողորմեայ . . . Շահիկ հանըմը
հրամանքդ չեա . . . հէլէ աղէկ մը նայէ
նայինք . . . իրաւ քի հիմա հրամանքդ
եւրիւ գուլում եղած ես ամա, էյ օլտուխ-
ճա հին վախիթն ալ բէք խօլայ չի մոռցուիր :

— Ան պաշխա Շահիկ ըլլալու է, զէիէ
հիշ իշողութիւնս չէ . . . :

— Հաղա՛, հաթթա . . . նէ իսէ չըսուիր
ամա, խթումին գիշերը մինք խալխան ծուկ
կը տապկէինք կոր տէ դուք չունէիք, Մէր-
կերիոս աղան տաք տաք երկու կտոր թա-
վային տակէն առաւ ձեզի բերաւ, հոտերը
քէսկին ելաւ տէյի . . . :

— Տահա նէլէ՛ր . . . կնիկ ինչե՛ր կըսես
կոր . . . :

— Պէլքի խելքիս եկած է ամա, չիտալը
աս է կալրուս, հիմաճուկ-ձեզի իրիճաի մը
եկայ . . . :

— Ի՛նչ է, ան ըսէ նայիմ, աս քիչ մը
ղէնկին ըլլալդ գիտնալնուն պէս տունիդ
չախշախը կը մաշեցնեն կոր . . . ըսէ նայիմ
ի՛նչ կուգես . . . :

— Ես անանկ մարացկաններէն չեմ քու-
րուկ, էկէր օր քի վախդին ձեզի չի ճանչ-
նայի նէ չէի իգար, ամա վախտով մենք
ծառքերնուս եկածը ըրեր ենք, հիմաճուկ
ձեր հալը վախտը տեղն է նէ . . . ինչ ըսեմ :

— Աս ո՛ր մեկերնուդ հասնելու է չիյ-տեմ քի . . . :

— Հիմաճուկ ըսելիքս սա է քի, ես մանչ զաւակ մը ունիմ, սա ուր է պէլքի միտքդ կուգայ Տարսաւիչս, սա ուր է, կը խըպնիմ կոր ըսելու ամա, միտքդ պիտէ՞մ տէյի պիտի զուրցեմ, պէքեարի գօլա կը-նէիր տէ, եավրուս կառնէր տուները կը տանէր . . . :

— Աման խաթուն, ինչե՛ր կըսես կոր... (Տիկինը տակաւ կապուտ կըլլայ, մինչ սպասուհին կուգայ իմացնել թէ՛ միւսիւ Բարսեղը, տան ծանօթներէն երիտասարդ մը եկած է եւ տիկինը տեսնալ կուզէ) :

— Սէօյլէ պուլուրսուն կըսէ, ու քիչ վեր-ջը միւսիւ Բարսեղ կանթէ, պօթէ ներս կը մտնայ սալօնէն :

— Օ՛ . . . բարի լոյս մատամ . . . նե-րեցէք զձեզ անհանգիստ ընկուս, այսօր բառթի տը լրէզիւ մը ունինք, կը յուսանք թէ ձեր ներկայութիւնը չպիտի զլանաք . . . :

— Ա՛ . . . չատ չնորհակալ եմ, արդէն այսօր պտոյտի համար Մասէին լանտօ մը ապրսպրած եմ . . . տեսնենք կարելի է յարմարիմ . . . :

Հեռուն նստող սեւերով կինը խօսք առ-նելով .

— Նայէ քուրուկս Աստուած տայ էլլէն-ճէնիդ, ճիւղալիւնիդ թամամ է, իմ-իրի-ճաս ալ հէլպէթ խաղուլ պիտի ընէք . . . :

— Աստուած համբարութիւն տայ տիկին, կարծեմ ամէն օր այս գլխուցաւ կնիկները կը լսէք, կը հոգաք . . . :

— Ախ . . . քաշուելու բան չէ, մարդ ասանկ հարուստ եղաւ մի, ալ այս տեսակ կնիկները բան դործ կընեն, կեւլան կուգան...

— Ա՛ք կընես քուրուկ, ես մուրացկան չեմ, քուկին հին դրացինդ եմ քի, հիմա-ճուկ տիւշկին եմ տէ իրիճայի եկեր եմ... վախտով հրամանքդ ալ ինծի պէս, հէմ ալ ինէ ալ տիւշկին էիր ամա ինչ Փայտա . . . թէճէլիդ . . . :

— Սո՛ւս . . . հայտէ դուրս ելիր . . . հէմ կը մուրաք հէմ ալ ապուխ սուպուխ լախըռըներ . . . քեզ մտիկ չեմ կրնար ը-նէր, հիմա միսաֆիր ունիմ . . . :

— Անանկ խօսայրնա դուրս չեմ ելար Շահիկ հանրմ, ինչո՛ւ կը կարմրիս կը ճեր-

մըկիս կոր . . . նա թող միւսին ալ իմա-նայ, ես վախտով ձեզի քիչ մը քիչ էլլիկ եմ ըրեր . . . էքմէքճին պառ պառ պօռա-ցած վախիթը, ես պերանը կոցեր եմ, քէօ-միւրնիտ հատած վախտը քիւֆէ քիւֆէ ես ձեզի հասուցեր եմ, տղադ պատուած տիպը պաց պտըտած ատենը, աղայիս հին բան-թալօնը տուեր եմ տէ պղտիկցուցեր հագ-ցուցեր ես . . . :

— Տիկին, ինչիւր կըսէ կոր այս ջատուկը... դուրս հանեցէք (կըսէ միւսին) :

— Էլէնի՛ . . . :

— Էլէնին Դաթիւնան կանչելուտ, խելքդ տուն կանչէ քի հասկընաս, էրիկդ էշը առ-ջին ձգած մահալլէ մահալլէ, իփէկճի տիր... պուռացած վախիթը միտքդ պեր, մէյմնալ քուկին պէքեարի չամաշիր քօլայիլդ . . . հիմա երկու մանղուի տէր եղեր ես տէյի ինծի պէս զաւալլուն չեմ ճաշնար կոր . . . հոս քեզի չեն ճաշնար նէ, ես աղէկը գի-տեմ . . . :

— Կընիկ խելքի՛դ եկաւ . . . նասըլ չա-մաշիր, նասըլ էշ . . . :

— Հա՛, հա՛ Սամաթմուրուս եկուր տէ հին մէքեանդ տես, խառըլ խառըլ գիտես, ամա, գործիդ չիգար կոր, նայէ հիմաճուկ կուոն փէշ ես հագեր, բառթամէնթօ կը նըս-տիս կոր, ուշախներ, աշճիներ . . . տահա մատներդ հոտմտամնէ, սոխին հոտէն քիթս կիյնայ . . . ինչ Փայտա ապ օր զէնկին ես... :

Տիկինը տեսնելով որ քանի խօսքը եր-կարեր, այնքան հին ու քոսոտ տետրակներ պիտի թղթատուէր, միւսիւն հետ միասին դուրս կելլայ սալօնէն, մինակ ձգելով ջա-տուկը :

— Ա՛խ . . . սողաւտան կէօրմէնէր . . . ինչտար նազիք ըլլաք նէ, նազէնիմ չէք կրնար ըլլալ, մարդ չիյտէ նէ ես գիտեմ... ըսելով երբ կը պատրաստուի մեկնիլ, յան-կարծ անակնկալ պատահարով մը Դամիանոս աղան տուն դարձած ըլլալով, ներս կը մտնէ սենեկէն :

— Վո՛ւյ Դամիանոս աղաս, հիւ ալ չես փոխուեր, քիչ մը պըրքիդ ճերմակը չատ-ցեր է, իս ճաշցիր . . . :

— Չէ ամա՛ . . . գիտես քի . . . :

— Հապա, Սամաթմուրուսի տուններնուդ դրացինը չեմ . . . տէր ողորմեայ, էշէկիդ խոտը մեր պախճայէն կը թոփէիր . . . :

Դամիանոս աղա հին օրերու յիշատակութիւնը իմանալով սիրտը կարիւնի ու կառ կարմիր կըլլայ, իր հաւատարիմ էջուն անունը լսելուն:

— Սա դիտես խաթումին գիշերը. ծուկ չի կրցաք առնելու տէ, աղաս տաք տաք հոտերը ելաւ տէյի երկու երեք կտոր խաւրից . . . :

— Հա', հա', միտքս կուգայ կոր հէյալ մէյալ, էյ ինչ կայ, ինչ կուղես խաթումն...

— Հիչ, ինչ պիտի ուզեմ . . . զաւակս գործի մը գնէիր . . . :

Նոյն աստիճան տիկինը ներս կը մտնայ.

— Բա ճանրմ տա կընիլը տահա հո՞ն է, թող երթայ վարը էլէնիին օտան նստի տէ ինչ կուղէ նէ անոր ըսէ . . . անթիւնէ կե. բակուր թող տան . . . :

— Ձէ քուրուկս չէ, ես անանկ պէսլէմէյի օտա նստող պոյերէն չեմ . . . նայէ քեզի առաջ ալ ըսի քի, ըլիւրդ ճըլսըդ գիտեմ տէյի, փէշերս սօթթելուս պէս քեզի հոս չեմ նստեցուններ . . . :

— Էյ բէկ աղէկ կըսէ Դամիկ աղա, դործը գոցելու համար, վաղը մաղազան ղրկէ տէ բան մը կընենք . . . :

— Նայէ խելացի մարդը, ինչ տար քի ղէնկինցերէնէ առջի ցած սիրտութիւնը վրան է, դուն . . . կոնակդ տաքցածին պէս, նէ օլտում տէլիսի ես եղեր . . . :

— Ան առջի ատենը անցաւ, հիմակուանը նայինք . . . հէլպէթ, փարայ ունիմ խառուրիլ կըլլամ . . . :

— Փառատիս հէմէն տէ հէքիմներուն տաս, բօստալ կնիկ, կըսէ մտքէն ու շալը գլուխը առած ղուրս կելլայ սենեկէն:

×

Դամիանոս աղային պէս նորելուկ հարուստներ չեն պակսիր հրապարակին վրայ, որոնք մոռցած իրենց նախորդ վիճակը, իրենէ aristocrate հովեր կառնեն, դիտողին քրթիջները հրաւիրելով իրենց վրայ, ու ընտանիքն անդրադառնար, չեն յիշեր թէ իրենց, այս ներկայ վիճակէն առաջ իրենք քօլա կամ լուացք կընէին ու իրենց խեղճ ամուսինն ալ էջուն հոտէն կը պօռար փողոցին երկայնքը.

— Իփէքճի . . . տիր . . . :

ԼԻԼԱ

ԱԶՔԵՐՆԻԴ ԼՈՅՍ

ԳՈՐԾԻ ԳԱԼԻՔ ՆՈՐՈԻԹԻԻՆ ՄԸ

Հագուիլ, շուիլ եւ ադամանդներով զարդարուիլ, ինչպէս նաեւ քան կարասիներ կոկել ամէն կերպով, առանց քսակնիդ պարպելու

ԱՅԼ

ԱՊԱՌԻԿ

Մայր ես, աղջկանդ օծիտը կը մտածես՝ դիմէ՛.

Օրիորդ ես, շիր եւ ածուն հագուիլ կուզես՝ դիմէ՛.

Երիտասարդ ես եւ շիր կը սիրես՝ դիմէ՛.

Տարեց ես եւ ցուրտէն պատասպարուիլ կուզես՝ դիմէ՛.

Տղաներ ունիս որոնց պիտոյքը զանկ կը ճամբցնեն՝ դիմէ՛

Ամուսնացու աղջիկ ունիս՝ ըրզակներու պէտք ունիս՝ դիմէ՛

Եկածը Կաղանդ, է նուէրներ գնել կը փափաքիս՝ դիմէ՛...

Տարին բանի մը անգամ հովանոց գնելէն զգուած ես՝ դիմէ՛

Ձեռքդ պարսպ ճամբայ քալել չես սիրեր՝ դիմէ՛.

Կուզես տունդ կոկել ճաշակաւոր կարասիներով՝ դիմէ՛

Առաջնակարգ եւ տոկուն գուլպաներու պէտք ունիս՝ դիմէ՛

Կուզես շիր, ճաշակաւոր եւ լաւ տեսակ փողկապներ ու-

նենալ՝ վերջապէս կուզես ոտից ցլուէի հագուիլ, շրուիլ՝

պճուիլ

Դիմէ՛ միմիայն

“ՀԷՐՃԱՅԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵՄ ՇՈՒԿԱՅ, Դուշումճըլար փողոց թիւ 13

ուր պիտի գտնես ամէն տեսակ հաղուստի, ճերմակեղէնի, ֆանթէզիի, աղամանդի, ժամացոյցներու, շղթաներու եւ ամէն տեսակ կարասիներու ճոխ մթերք մը:

ՎՃԱՐՄԱՆՑ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ զնոդներու համար հարիւրին 20 կանխիկ եւ մնացեալ գումարին հարիւրին 5ը չարաթական վճարմամբ.

2. Կանխիկ զնոդներու համար հարիւրին 5 ղեղչ.

3. Կանխիկ ծախուած ապրանքներէն միմիայն աղամանդեայ դահարեղէնները երբ գործածուած բայց անվնաս մնացած ըլլան, հարիւրին 10 ղեղչով, իսկ ապառիկ ծախուած եւ անվնաս մնացած միմիայն աղամանդեայ դահարեղէններէն ալ հարիւրին 15 ղեղչով ետ կ'առնուին:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ 24ԱՅ

24—30

Հետեւեալ ճաշացուցակը, պատրաստուած ծանօթ ուսուցիչ Դէորդ Սիմքէշեան էֆէնտիի կողմէ: Կարգացուած է նախորդ կիրակի, Գունդարուի դրսի վարժարանին մէջ ի պատիւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր սարքուած սեղանին, և զոր հաճոյքով կը հրատարակենք այս կարգի պարագաներու մէջ սիրուն նորութիւն մը եղած ըլլալուն համար:

M E N U

Բարձրագոյն դրան պողոտային երբ անցնի. Կը տեսնէ հոն շինք մը օրհնող, կարկառուն, Որ կը ցրցէ ձեր դէմ խրոխտ իր անձիք, Այն տեղումն է քննեալու հ'ն աշխուռն:

ՄՈՏԷՆՆ, ՄՈՏԷՆՆ, ահա՛ անունն ալ անոր, Որ դիւրանք մ'է կարծես ամբողջ հե՛տ, անձա՛ն Կան ու կազմած, պերճութիւններ նորանոր, Կը գրաւեն ամենուն աչքն անպատշաճ:

Մրէկ' իսկոյն, իրկուն ըլլայ քէ առտուն, Մրէկ' մրէկ', քայլերով փո'յք, անվարա՛ն, Նորոյքի շարք մը կ'ողջունէ ձեզ ժպտուն, Նորոյք մ'է հոն արդէն ՄՈՏԷՆՆ նաւարան:

Մրէկ, մրէկ, այց մը տրէկ ՄՈՏԷՆՆին, Որ ըմբռնէ զուր լիապես իր նաւակ, Այցելողներ կը լրգուրտեն մասններին, Ճաշակելով մեր խորհիկներն անուշակ:

Սակայն ինչո՛ւ ես ձեզ նաւեր կը կարգամ, Յրբ նաւերէն ես իսկ կը զգամ մեծ տաղանակ, Ահա՛ ձեզ փաստ սա խորհիկներն համադրամ, Որոնք ՄՈՏԷՆՆ նաւարանին են յատուկ:

Նախ սա՛ պառնա առէք ախա՛րժ, անձրման, — 20 տարուան արդիւնք մեր նոր բարութիւն — Վեց հաւ լոգանք ըրին հոն ժամ մը լրման, Տալու ձեզի հանոյք մը մեծ ու հեծին:

Բայց չկայ բան մ'որ մըցի հետ գառնուկին, — Սիրուն հակ, անմեղ, աշխոյժ ու կայտառ, — Կուտար ամբողջ իր միլիառներ Գառնեկին, Թէ նաւակէր անոր միսէն մէկ պաշտառ:

Մոռնալ չըլլար սակայն սիրուն սա՛ հաւեր, Որոնք Զատիկն զարդ կը բերեն իրենց ձուն, Տեսէք ի՛նչպէս կ'ուղղեն լրոյիկ ձեզ հաւեր, Անոնց գիտեսներն համեղ, պարտաք ու լեցուն:

Բայց քէ կուզէք որ սրի ձեր ախորժակ, Ըստմոսի իբրեւ զօրեղ ամոսիչ, Պէտք է պարպել զէք մէկ երկու հաս բաժակ, Ընտիր գինի, մեզն ալ խառնած ջուր մի բիչ:

Չեմ գիտեր քէ հայ լեզուով ի՛նչ կրտէք դուք, Սա՛ «Մայրենեկ» բառին, պերճանք սեղանի, Շատեր այժմէն պիտի կըլլեն իրենց բուր, Ազգութիւնով անոր տեսքէն գեղանի:

Ահամարհէք պիտի գուցէ դուք հիմակ, Սա՛ լուրիան դալար, շրթեղ ու բնիւր, Սակայն հո՛ն ալ դրբինք փոյթով մը համակ, Մեր արուեստին ներութիւններն անխորհրդ:

Բայց ի՛նչ որ հոս պիտի գրենք hors concours, Միւսանոյքին բուրգն է բրբռուն, ժպտալին ժանտակներու խուրձ մ'է կարծես պե՛րճ, մա՛մուր

Մեծախորհիկ սեղաններու զարդն անցին: ՄԱՐՍՈՂՈՒԹԻՒՆ, ահա մաղբանք վերջին, Զոր ձեզ կուղղենք իբրեւ նրէր սրագին, Դուք օրհնեցիք մեր աշխատանքը չընչին, Այս կը տեսնենք միայն պրսակ մեր վարձին:

ԱՌԱՔԵԼ ԹԵՓԻԿԵԱՆ

Տէր եւ վարիչ

Մոտեն նաւարանի

Ժ Ա Մ Ա Ն Ո Ւ Մ

Գալֆահան որբանոցի խնամակալուհիներէն Ազն. Տիկին Իսկուհի Փափաղեան, և դուստրը Ազն. Տիկին Ս. Շահպաղեան, որոնք երուսաղէ՛մ գացած էին, Կիրակի Պոլիս ժամանեցին Մեսայրուի շողանալով: Խրմազորութիւնս բարի գալուստ կը մաղթէ ջերմապէս:

ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ


Հաճոյքով կը ծանուցանենք թէ Հանր. Պարտույ վարչութեան կարող պաշտօնեաներէն Հայկ Էֆ. Թայքէսէնեան Պոլսոյ Գերմանական դեսպանատան Ա. Թարգմանի օգնական անուանուած է, և իր պաշտօնին ձեռնարկած:

Թայքէսէնեան էֆէնտի, որ ինքնօգնութեամբ յառաջդիմողներու մէջ օրինակելի տիպար մը կրնայ համարուիլ, լեզուական կարողութիւններուն և անձնական արժանիքին լաւագոյն գնահատումն է այս անուանումը, որուն համար ջերմապէս կը խնդակջինք իրեն:

«ՀԱՆՐԱԳԻՏԱԿ»-Ի ԹԵՐԹՕՆԸ 14

Հեղինակ՝ ԼՈՒԻ ՊՈՒՍԸՆԱՌ
Թարգմանեց՝ Յ. ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

10,000 ՏԱՐԻ ՍԱՌՆԱԿՈՅՏԻ ՄԸ ՄԷՁ



Թանգարանին մէջ Մ. Սէնթեղ ուշադրութեամբ կը դիտէր բոլոր մնացորդները և անոնց վրայի բացատրողական նշանատախտակները։ Մերունի գիտունը, որ բնաւ չէր խնդար, ինքզինքը քրքրալէն հազիւ կրցաւ բռնել այդ տարօրինակ բացատրութիւններուն առջև։ Այս միջոցին մօտեցաւ Մեծ-ծերունի-պարոնը և ըսաւ երկաթուղիի գիծերը ցոյց տալով։

— Ասոնք երկաթի դարէն մնացած են, կարծեմ ձեր ժամանակներէն ետքի գործ մ'է, և ու է գիրք այս մանկն ըսն մը չըսեր։ Այս երկու զուգահեռական գիծերը կը ծառայեն եղեր ձեր ցեղակից Մաօ-Չիններուն բախտներուն համար որպէս զի կանոնաւոր կերպով սահին սառույցներուն վրայէն։ Այս սահնակին վրայէն, հինները ծանր բեռներ և նոյն իսկ զէնքեր կը փոխադրեն եղեր մէկ տեղէ մը միւսը։

Մ. Սէնթեղ որ երկաթուղիին այս տարօրինակ բացատրութենէն հետաքրքրուած էր, աչքը դարձուց Ամերիկեան Վիթ-Լօրթ դռմբերուն վրայ, որոնց համար ալ նա բացառութիւնը տուաւ Մեծ-ծերունի-պարոնը։

— Կը տեսնէք բացատրողական նշանատախտակը որ կոնախաղ կը խաղան։ Հին դարերու մէջ, երկաթեայ դարու մէջ, մարդիկ կոնաձև գունդեր կը չինէին և ոտքով կը խաղային անոնց հետ, տեսակ մը գընտախաղ, որ մինչև այսօր կայ մեր Մաօ-Չիններուն քով, բայց փոխանակ անոնց պէս երկաթ գունդերու, փայտէ են։ Դալով սա խոշոր երկաթին, չարունակեց ծերունին ցոյց տալով մաշած թնդաթօթը, ասիկա ալ զոհաբերութեան սեղան մը ըլլալու է, դասելով իր ոտքերէն, ձեռէն և անշարժ ըլլալու աստիճան ծանրութենէն։ Այն ա-

տենի մարդիկը, սրոնք ֆիզիքական ուժով չափազանց զօրեղ էին մենէ, այս յասկան նշանական մետաղը կերտած էին զոհ մատուցանելու իրենց կուռքերուն։

— Բայց ուրիշ հետքեր ունի՞ք նոխապատմական աստուածութեան վրայ։

— Մինակ աս կայ։ Թէ ինչո՞ւ այս դաշտաբարդ ունեցած ենք, բացատրեմ։ Այս հսկայ գործիքը գտնուած է մեր երկրին հիւսիսակողմը, աւազի մէջ թաղուած։ Նշանատախտակին վրայ կը տեսնէք զոհաբերութեան ներկայացում մը զոր արուեստագէտը պատրաստած է իրերուն և գիւտերուն զատումով։ Այս գործիքին հետ, աւազներուն մէջ հանուած են նաեւ բաղմաթիւ կմախքներ, որոնք անհոլորար չաստուածի մը մատուցուած զոհերունն են։ Դուք ցէ ալ սխալիմ, որովհետեւ երկրաբանական ախտանշան փոփոխութիւններ եղած են որ...։ Ահաւասիկ, անագապղինձի սա խաչը, (ցոյց տալով չոգենաւի անիւը) որ այն առարկաներուն հետ գտնուած է և ձր սակայն լուսլորովին տարբեր ժամանակի մը գործ է վտանաբար։ Ահա խելք չենք կրնար հասցընել թէ ինչ կընէին ասիկա, ինչո՞ւ մէկ աջ մէկ ձախ ծռած են թեւերը, որոնք եթէ հինգ կամ վեց ըլլային, գուցէ բռնէին թէ Մաօ-Չինները փորձած են լուսաւորի մը ձեւը չինել։ Բայց քիչ մըն ալ միւս յարկաբաժինը երթանք ուր կը գտնուին բրուտեղջիկները և հողէն առարկաները։

Այցելուները խուճրը, այս ընտանի տեսակցութենէն չահագրգռուած, անմիջապէս անցաւ միւս յարկաբաժինը, ուր Մ. Սէնթեղ որ անակնկալներու կ'սպասէր, բան մը չտեսաւ բացի գետինը տարածուած գործարանի երկար և բարակ ծխնելոյղէ մը աղիւսէ

չինուած : Ծինեկոյզը թէ և տեղ տեղ կըտ-
րուած էր , բայց խնամով քով քովի բեր-
ուած :

— Ասիկայ , բացատրեց Մեծ-ծերունի-
պարոնը , անպատճառ մէկ կտորն է Մա-
Չիններու ստորերկրեայ մէկ ջրանցին զոր կը
չինէին մէկ տեղէ մը ուրիշ տեղ ջուր փո-

խաղրելու հար : Ի՞նչ կըսէք զուք ասոնց
Նախածին , բացատրութիւններ : որքան ճշ-
մարտանման են մեր ջանքերը զանոնք լու-
սաբանելու համար :

— Կը խորհիմ թէ նախապատմական ժա-
մանակներու ուսումնասիրութիւնը հրապոյ թիշ
է և սակայն անակնկալներով ալ լեցուն . . . :

ՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Գիշեր է և մթնոլորտը հիանալի պայծա-
ռութեամբ կը փայլի : Ամպի ոչ մէկ ծուէն
կայ , մշուշի ոչ մէկ թեթեւ շղարշ : Երկինքի
խոր կապոյտին վրայ լուսաւորները աննման
ցոլքերով կը ճառագայթէին : Մէկ խօսքով
քերթողներու և բնագէտներու ճշմարիտ
գիշեր մը :

Մ. Սէնթեզ փորը լեցուցած էր որքան
գիտական նոյնքան ալ այլազան կերակուր-
ներով և մարսողութեան սկսած : Իր սիրելի
ընկերները , նոյնպէս կուշտ , պատրաստուեցան
ճամբորդութեան մը , որուն նպատակը Շուէ-
տացի նախապատմական գիտունին փութ-
կոտութիւնը գրգռեց :

— Համբերութիւն , Նախածին , կրկնեց
Մեծ-ծերունի-պարոնը երկրորդ անգամ ըլլա-
լով : Արդեն գիտես մեր արշաւին հիանալի
արագութիւնը , ուրեմն ի՞նչ հարկ մեկնիլ
այժմ , շատ կանուխ հասնելու համար հոն...
Ժամանակ կայ դեռ , սպասելով խօսինք
քիչ մը , եթէ կուզես :

— Աղէկ , խօսինք : Անշուշտ ներուամիտ
կը գտնուիք , երբ հարցումներս սկսիմ : Դեռ
օր մը անցուցի ձեզ հետ , բայց ուշադրու-
թիւնս ամենէն աւելի գրաւեց սա բանը :
Ձեր ամենէն բաղձամարդ քաղաքը , Թոմ-
պուքթուն տեսայ ահա և հոն ու է հետք
չնշմարեցի առեւտուրի և ճարտարարուեստի :
Ահա ինչ որ զիս կը չփոթեցնէ , քանի որ
քնացած եմ անանկ դարու մը մէջ ուր վա-
ճառականութիւնը և ճարտարարուեստը ծայ-
րայեղ վիճակի մը հասած էր :

— Հը' . . . : Ի՞նչ հարկ չահադիտու-
թիւններ ընելու և երկրէ երկիր յարաբերու-
թեան մէջ մտնելու երբ մենք ունինք պէտք
եղածը՝ մեր բարեկաւութեան համար , ալ
ի՞նչ ընենք աւելին : Մեր նիւթական պէտ-
քերը այնչափ նուազած են որ ամենայեան

աստիճանին հասած են և որկրամոլութիւնը
անծանօթ , անգոյ մեղք մըն է մեզի համար :
Մեր բարեկաւն կլիման ենթակայ չէ ու է
փոփոխութեան և եղանակներուն առթիւ
մտածելիք բան մը չունինք : Մեր հազուստ-
ները պարզ , լայնկեկ , պատշաճ , յարմար
ձեւուած են մեր չափաւորութեան և հա-
մակերպող բնութեան . . . : Մեր հազուստ-
ներուն ձեւը անփոփոխ պահուած է
ծախքերը որոշող օրէնքներու շնորհիւ , ո-
րոնք երկար տարիներ գործադրութեան մէջ
պահուած են :

— Բայց պէտք է դարձնալ աս հազուստ-
ներն ալ պատրաստել և ձեր կերակուրները
չինել :

— Մա-Չինները կաւաւագործներ են :
Գալով սնունդին , բաւական է քանի մը
քիմիական աշխատանոց ուր կարգով կ'աշ-
խատինք ամենքնիս ալ , ինչպէս զպրոցնե-
րուն մէջ :

— Մնունդի նիւթերը ձեր ձեռքին տակ
պատրաստ չեն կարծեմ . . . :

— Բայց անոնք աշխատաւորներուն մօտ
են և այնպէս մը կարգադրուած են որ միշտ
պատրաստ մթերք մը գտնուի : Գալով ընդ-
հանուր պարենաւորման , կը մոռնաք թէ ,
ամէն մարդ մէկ ակնթարթի մէջ կրնայ ու-
ղած տեղը երթալ , և առանց փոխադրու-
թեան դժուարութեան , իր մարմնին ելեկ-
տրականութիւնով առնել բերել պէտք ե-
ղած ուտելիքէնի նիւթերը :

(Շարունակելի)

ԱՐՏՈՑԱՆԵՐ ԱՐՄՈՒՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն — ՃԻՀԱՆ ԴՐԱՏԱՆ

Պատ.Ալի Եասէսի Թ. 38

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՊԵՐԶԵՂԻՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուլթան Համամ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաջ առկունութեամբ և գիներու անմրցելի աժանութեամբը շահած է բոլոր իրեն դիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հաղուստներու, կանանց քեջդոիկներու և տղայոց չիք և դիմացկուն ֆօքսիւսներու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հազուատի և ուրիշ նմանօրինակ պիտոյից .


Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրչ է. Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին .

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

Ե Ի

ՀՈՏԱԻԷՏ ԹԷՅԵՐ

Կ. Պոլիս, Պահագրափու, ձեյալ-Պեյ խան, քիւ 10



Ա Ն Տ Ե Լ Ի Պ
Վ Ա Ժ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳԱՐՄԱՆԱՅ ԵՒ ՊԵՏՈՑԻՑ

ՄԱՍՆԱԻՐԱԲԱՐ

Ֆոնոկրաֆի Եւ Գրաֆոֆոն Կրամֆոնի
Եւ Երկկողմ Բլագներու, Կեդրոնա-
տեղի Պահագրափու, Հաճի Պեքիբ
Էֆենտի կից, Նախագ խանի տակ
քիւ 2: Մանաճիւղ Պահագրափու
քիւ 52:

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանաց տո-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
շահած համբա-
ւը բազմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը վտւթանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
զրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամֆոֆոններ և երկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլագներ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ
դառնալով բոլոր նմանօրինակ ապրանաց հետ, թէ՛ տոկունութեամբ, ձայնի առաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ: Գաւառներէն եղած յանձնարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ:

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել
կեդրոնատեղին: